# Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր № Հ/004

Հոսթինգային ծառայությունների բաժանորդագրման

**Ք.ԱՐԱՐԱՏ** **26.01.2017թ**

«ԱՐԱՆԵԱ» ՍՊԸ-ը, այսուհետ՝ Կատարող, ի դեմս՝ տնօրեն Անդրանիկ Մինասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, և ՀՀ ԿԳՆ **«Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ, ի դեմս՝ տնօրեն Էլլա Գասպարյանի,** այսուհետ՝ Պատվիրատու, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. *Պայմանագրի առարկան*

1.1 Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին տրամադրել Հոսթինգային ծառայություն, այսուհետ՝ Ծառայություններ (սարքավորման վրա դիսկային տարածության տրամադրում) Պատվիրատուի ընտրած սակագնային պլանին համապատասխան ծավալով և բնութագրություններով, իսկ Պատվիրատուն իր հերթին պարտավորվում է ընդունել Ծառայություններն ու վճարել դրանց համար սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագիրը կնքվում է անորոշ ժամկետով և շարունակում է գործել, եթե այն չի լուծարվում սույն պայմանագրով սահմանված կարգով:

2. *Կողմերի իրավունքները և պարտականությունները*

2.1 Կատարողը պարտավորվում է պայմանագիրը ստորագրելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել Ծառայությունների մատուցումը:

2.2 Կատարողն իրականացնում է Կատարողի տրամադրած սերվերային սարքավորման և ծրագրային միջոցների աշխատանքի ղեկավարումն ու հսկումը:

2.3 Կատարողը պարտավորվում է ապահովել իր տրամադրած ծրագրային միջոցների աշխատունակությունը և դրանց համատեղելիությունը այլ ծրագրային ապահովման հետ՝ համապատասխան ծրագրային միջոցների փաստաթղթերով դրված սահմաններում:

2.4 Կատարողն իրավունք ունի կանգնեցնել, փակել կամ արգելել Պատվիրատուի՝ ծրագրային ապահովումից օգտվելու հնարավորությունը այն դեպքում, եթե այդ ծրագրային ապահովման կիրառումը կարող է հանգեցնել վթարային իրավիճակների, անվտանգության համակարգի կամ սույն պայմանագրի պայմանների խախտման:

2.5 Պատվիրատուն պարտավորվում է Ծառայություններն օգտագործել համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և սույն պայմանագրի պայմանների:

*3. Պայմանագրի գինը և հաշվարկման կարգը*

3.1 Պատվիրատուն վճարում է Կատարողին նրա կողմից մատուցված Ծառայությունների համար համաձայն Պատվիրատուի կողմից ընտրված Spider-8000 սակագնային պլանի, որը կկազմի ամսական 8000/ութ հազար/ՀՀ դրամ:

3.2 Կատարողի կողմից հարկային հաշիվ(ները) տրամադրվում են Պատվիրատուին՝ նրա ցանկությամբ, ամեն ամիս նախորոք տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեով, փոստային ծառայությունների միջոցով կամ Պատվիրատուի կողմից լիազորված անձի միջոցով: Պատվիրատուն վճարում է պայմանագրում նշված Ծառայությունների համար հարկային հաշիվ(ները) ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրերի ընթացքում: Նշված ժամկետում վճարումը չկատարելու դեպքում Կատարողն իրավունք ունի դադարեցնել ծառայությունների մատուցումն առանց Պատվիրատուին նախապես զգուշացնելու:

3.3 Հաստատագրված վճարումներով ծառայությունների համար Պատվիրատուն կատարում է կանխավճար առնվազն մեկ ամսվա համար ըստ ընտրված սակագնային պլանի արժեքի, իսկ մյուս վճարումը կատարվում է Պատվիրատուի կողմից մինչև կանխավճարի սպառումը:

3.4 Բոլոր հաշվարկները և վճարումները կատարվում են ՀՀ դրամով և ներառում են ԱԱՀ:

*4. Կողմերի պատասխանատվությունը*

4.1 Կատարողը երաշխավորում է բիզնես շրջանակներում ընդունված չափանիշներին համապատասխան քայլեր ձեռնարկել Պատվիրատուի ինֆորմացիոն անվտանգությունը ապահովելու համար:

4.2 Կատարողը պատրաստակամ է Պատվիրատուի մոտ տարաբնույթ պատճառներից առաջացած խնդիրների լուծման համար ցուցաբերել մասնագիտական աջակցություն:

4.3 Կատարողը պատասխանատու չէ երրորդ կողմի պատճառով առաջացած ուշացումների, կապի խզման դեպքերի և Ծառայության խախտումների համար, որոնք չեն գտնվում Կատարողի հսկողության տակ:

4.4 Պատվիրատուն ընդունում է, որ Կատարողի կողմից ծրագրային միջոցների պարբերաբար թարմացումը անհրաժեշտ ու պարտադիր միջոց է սերվերի անվտանգությունը պահպանելու համար: Պատվիրատուն պարտավորվում է ինքնուրույն պահպանել իր սկրիպտերի և ծրագրերի համատեղելիությունը Կատարողի տրամադրած ծրագրային ապահովման հետ:
4.5 Պատվիրատուն ամբողջությամբ ինքն է պատասխանատվություն կրում ինտերնետային կայքում տեղադրված նյութերի բովանդակության համար:

*5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)*

5.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանգիրը կնքելուց հետո, և կողմերը չէին կարող այն կանխատեսել և կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավել, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

*6. Վեճերի լուծման կարգը*

6.1 Կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները կարգավորվում են բանակցությունների միջոցով: Վեճերը փոխհամաձայնությամբ չկարգավորվելու դեպքում դրանք ենթակա են լուծման Օրենսդրությամբ սահմանված կարգով:

*7. Եզրափակիչ դրույթներ*

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի կամ նրանց ներկայացուցիչների կողմից ստորագրման և հաստատման պահից:
7.2 Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք կատարված են գրավոր, ստորագրված և հաստատված կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից: Սույն պայմանագրի հավելվածները կազմում են նրա անբաժանելի մասը:
7.3 Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր երկու օրինակներից՝ յուրաքանչյուրին մեկական օրինակ:
7.4 Պատվիրատուի կողմից ուղարկված և ստացված ամբողջ տեղեկատվությունը ենթակա չէ հրապարակման, բացառությամբ Օրենքով սահմանված դեպքերի: Կատարողը կարող է ապահովել Պատվիրատուի տեղեկատվության գաղտնիությունը ոչ ավելի բարձր աստիճանի, քան նախատեսված է հեռահաղորդակցության ցանցերում ընդունված և օգտագործվող գաղտնիության նորմերով:
7.5 Բոլոր նախնական պայմանավորվածությունները, գրագրությունները և նախապայմանագրային այմանները, եթե դրանք չեն համապատասխանում սույն պայմանգրին, սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո դառնում են ոչինչ:

*8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

**Կատարող՝** «Արանեա» ՍՊԸ
**Իրավաբանական հասցե՝** ք.Արարատ,Խահակյան 32ա
**Գործունեության հասցե՝** ք.Արարատ, Խահակյան32/2
**Հեռախոս՝** 0234-4-10-19, 060-656-656
**Էլ. փոստ՝** info@aranea.am
**Հ/հ՝** 2474302219420000
**«Արդշինբանկ» ՓԲԸ, Արարատ մ/ճ**
ՀՎՀՀ՝ 04112207

Տնօրեն՝ Անդրանիկ Մինասյան

(ստորագրություն)
Կ.Տ.

**Պատվիրատու՝** ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ
**Իրավաբանական հասցե՝** ք.Արարատ, փ.Խանջյան,շենք 67
**Գործունեության հասցե՝** ք.Արարատ, փ.Խանջյան,շենք 67
**Հեռախոս՝** 37499972747/37423444101/37455665252
**Էլ. փոստ՝** araratcollege@mail.ru
**Հ/հ՝** 1150012303390100
**Հայէկոնոմբանկի Արարատի մ/ճ**
ՀՎՀՀ՝ 04000082

Տնօրեն՝ Էլլա Գասպարյան

(ստորագրություն)
Կ.Տ.

# Հարկային հաշիվ
(ապրանքների մատակարարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|
| 26 | Հունվար | 2017 թ. | Ա | 7827469916 |

| [4] Մատակարարման ամսաթիվ | | | Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «X») | հատուկ |
|---|---|---|---|---|
| 26 | Հունվար | 2017 թ. | | |

| Ճշգրտվող հաշվի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |
| Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար | |
|---|---|---|---|
| | 26 Հունվար, 2017 թ. | 26/01/2017/01 | [7] |
| | | | [8] |
| | | | [9] |

[10] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Իրավաբանական անձ/ապրանքների իրացում

**Ապրանքներ մատակարարող (առաքող) անձի**

| | |
|---|---|
| [11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 4 1 1 2 2 0 7 |
| [12] Անվանումը | «ԱՐԱՆԵԱ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) |
| [13] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 4 1 1 2 2 0 7 / 1 |
| [14] Բանկային տվյալները | Արդշինինվեստբանկ ՓԲԸ Արարատ մ/ճ — N 2474302219420000 |
| [15] Գտնվելու վայրը (հասցեն) | ԱՐԱՐԱՏ Խսահակյան 32ա |
| [16] Վայրը, որտեղից ապրանքները մատակարարվում են | Իսահակյան 32/2 |
| [17] Լրացուցիչ տվյալներ | |

**Ապրանքներ ձեռք բերող անձի**

| | |
|---|---|
| [18] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 4 0 0 0 0 8 2 |
| [19] Անվանումը | ՀՀ ԿՐԹ ԵՎԳԻՏ.ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՐԱՏԻՊԵՏ.ՔՈԼԵՋ Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) |
| [20] Բանկային տվյալները | Հայբիզնեսբանկ ՓԲԸ — N 1150012303390100 |
| [21] Գտնվելու վայրը (հասցեն) | ԱՐԱՐԱՏ Խանջյան 67 |
| [22] Լրացուցիչ տվյալներ | |
| [23] Ում միջոցով | Անուն, ազգանուն: |
| | Լիազորագիր — Համար: |
| | Լիազորագիր — Ամսաթիվ: |
| [24] Ապրանքների մատակարարման (առաքման) եղանակը | |
| [25] Մատակարարվող (առաքվող) ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ք. Արարատ, Խանջյան 67 |

[26] Մատակարարվող ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Ապրանքի անվանումը | Չափման միավորը | Քանակը | Միավորի գինը | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումար | Ընդամենը | Այդ թվում՝ ակցիզային հարկ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | համակարգիչ ըստ կոմպլեկտ 017 | հատ | 2 | 191666.67 | 383333.34 | 20 | 76666.67 | 460000.01 | |
| 2 | համակարգիչ ըստ կոմպլեկտ 018 | հատ | 1 | 220833.33 | 220833.33 | 20 | 44166.67 | 265000 | |
| Ընդամենը | | | | | 604166.67 | X | 120833.34 | 725000.01 | |

Դուրս գրող՝ POGHOSYAN GRIGOR 3108900684
անունը, ազգանունը

Ստացող
պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)
պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

26/01/2017 11:01:28